ԻՆՉՈ՞Ւ ՉԵՆՔ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ՄՈՒՍՈՒԼՄԱՆ ՆԵՐՈՒԺԸ

Posted on July 29, 2011 by Keghart



Category: Opinions

Վահրամ Աղաջանյան, «Երրորդ ՈՒԺ» թերթի գլխավոր խմբագիր
Ստեփանակերտ, 28 Հուլիս 2011, Հատուկ «Գեղարդ»ին

Փոխան Խմբագրականի

Մեզանում տարածված է այն թյուր կարծիքը, թե հայ ժողովրդի բոլոր դժբախտությունների աղբյուրը մահմեդականությունն է՝ իր ռազմատենչ գաղափարախոսությամբ ու աշխարընկալմամբ, քրիստոնյա ժողովուրդների հանդեպ պատմական չթաքնված անհանդուրժողականությամբ: Հայրենական որոշ հրապարակախոսներ իրենց բնորոշ կրքոտությամբ սիրում են «մերկացնել» իսլամի կամ պանիսլամականության հայակործան վտանգավոր էությունը՝ պահ անգամ չմտածելով, որ դրանով միայն նպաստում են մահմեդական երկրներում ազերի էմիսարների հակահայկական քարոզչությանը և որպես հետևանք՝ հակահայկական տրամադրությունների աշխուժացմանը: Մինչդեռ 1915 թ. նաև արաբ մահմեդականներն են հազարավոր հայերի կյանք փրկել: Չլիներ Իրանի բարիդրացիական կեցվածքը հայ ժողովրդի նկատմամբ, շրջափակված Հայաստանն ու Ղարաբաղը կհայտնվեին տնտեսական անհամեմատ ծանր վիճակում:

Վահրամ Աղաջանյան, «Երրորդ ՈՒԺ» թերթի գլխավոր խմբագիր
Ստեփանակերտ, 28 Հուլիս 2011, Հատուկ «Գեղարդ»ին

Փոխան Խմբագրականի

Մեզանում տարածված է այն թյուր կարծիքը, թե հայ ժողովրդի բոլոր դժբախտությունների աղբյուրը մահմեդականությունն է՝ իր ռազմատենչ գաղափարախոսությամբ ու աշխարընկալմամբ, քրիստոնյա ժողովուրդների հանդեպ պատմական չթաքնված անհանդուրժողականությամբ: Հայրենական որոշ հրապարակախոսներ իրենց բնորոշ կրքոտությամբ սիրում են «մերկացնել» իսլամի կամ պանիսլամականության հայակործան վտանգավոր էությունը՝ պահ անգամ չմտածելով, որ դրանով միայն նպաստում են մահմեդական երկրներում ազերի էմիսարների հակահայկական քարոզչությանը և որպես հետևանք՝ հակահայկական տրամադրությունների աշխուժացմանը: Մինչդեռ 1915 թ. նաև արաբ մահմեդականներն են հազարավոր հայերի կյանք փրկել: Չլիներ Իրանի բարիդրացիական կեցվածքը հայ ժողովրդի նկատմամբ, շրջափակված Հայաստանն ու Ղարաբաղը կհայտնվեին տնտեսական անհամեմատ ծանր վիճակում:

Տասնյակ հազարավոր հայեր այսօր էլ բնակվում են արաբական և միջինասիական տարբեր երկրներում, որտեղ, հավաստի աղբյուրների համաձայն, գոյություն ունեն ՀՀ-ի հետ սերտ համագործակցության պատրաստ հակաթուրքական բավական ազդեցիկ ուժեր: Չօգտվել դրանից՝ նշանակում է չտեսնել կամ մոռանալ սեփական շահը:

Գաղտնիք չէ, որ պատմական հանգամանքների բերումով բազմաթիվ հայեր, հաշվեհարդարից փրկվելու հույսով, դարասկզբին մահմեդականություն են ընդունել՝ պահպանելով, սակայն, ազգային ավանդույթները: Իսլամ ընդունած հայազգի հազարավոր քաղաքացիներ ներկայումս բնակվում են Թուրքիայում, Հյուսիսային Կովկասում: Չնայած շարիաթի օրենքների խստությանը՝ հավատափոխ հայերին բնորոշ է կրոնական որոշակի ազատականություն, և որ ամենակարևորն է, մեր հայրենակիցները չեն ձուլվել մահմեդական ժողովուրդներին, հիշում են իրենց ծագումը:

Հայտնի է, որ մահմեդական պետություններն ու համայնքները ամեն տարի գումարում են Իսլամական համաժողովի նիստ, որի ընթացքում, ի շարս այլ հարցերի, կարգավորվում է նաև մահմեդական այս կամ այն երկրին օգնություն (այդ թվում՝ ռազմական) ցուցաբերելու հարցը: Հայտնի է նաև, որ նշյալ համաժողովում Անդրկովկասի և Հյուսիսային Կովկասի մահմեդականության շահերը ներկայացնում է այդ տարածաշրջանների հոգևոր առաջնորդ, ազգությամբ ադրբեջանցի շեյխ ուլ իսլամ Ալլահշյուքյուր Փաշազադեն, ում ելույթների հիմնական մասն առնչվում է հայ-ադրբեջանական հակամարտությանը: Հակազդեցության չհանդիպող ադրբեջանական ու թուրքական պատվիրակություններին հաջողվում է կրոնական բնույթ հաղորդել ղարաբաղյան ճգնաժամին և դրամական հսկայական օգնություն ստանալ համաժողովի մասնակից երկրներից: Թե ինչ նպատակներով են ծախսվում այդ գումարները, հասկանալի է բոլորիս: Հայազգի իսլամականների մասնակցության պարագայում, սակայն, ադրբեջանական և թուրքական պատվիրակություններին հազիվ թե հաջողվի օգտվել այդ օգնությունից: Էլ չենք խոսում մահմեդական երկրներում հայամետ ուժերի գործունեության անխուսափելի ակտիվացման մասին:

Այս առնչությամբ ՀՀ-ում կամ ՀՀ-ից դուրս, թերևս, նպատակահարմար կլիներ նպաստել հայկական մահմեդական որևէ կազմակերպության, ասենք՝ Հայ իսլամականների միության (անվանումը՝ ըստ ճաշակի) ստեղծմանը: Կանխատեսում եմ բարեպաշտ հայ քրիստոնյա ընդդիմախոսների դժգոհությունը: Սակայն մենք հանդուրժում ենք հայազգի կրիշնայականներին, հայ բուդդայականներին, անգամ՝ հայ եհովականներին, որոնք արդեն փորձում են բանակ թափանցել՝ պատերազմող երկրում քարոզելով զինված պայքարի անթույլատրելիություն, և որոնք շատ հաճախ վնասից բացի հայրենիքին ոչինչ չեն տալիս: Հարց է ծագում. իսկ ինչո՞ւ չօգտվել հայ մահմեդականների ծառայություններից, մանավանդ, որ մահմեդականների թիվն աշխարհում հասնում է 1 միլիարդի, և իսլամական մի շարք պետություններ, ասենք՝ Իրանը կամ Արաբական լիգայի մասնակիցները, թերևս, սիրով աջակցեն այդ միության գործունեությանը: Եթե նույնիսկ ՀՀ-ում հիշյալ կազմակերպության ստեղծումը կապված է պատմահոգեբանական որոշ բարդույթների հետ, ապա դրսում բնակվող հայազգի մահմեդականների կազմակերպված գործունեությունը որևէ խոչընդոտի չի հանդիպի:

Թվում՝ ամեն խնդրի, հատկապես պետական շահերին առնչվող հարցերին պետք է մոտենալ պրագատիկ դիրքերից: Ցանկանում ենք, թե ոչ, բայց հայ մահմեդականությունն այսօր իրողություն է: Մերժողական կեցվածքն այս փաստի նկատմամբ, մեղմ ասած, իրատեսական չէ, խարսխված է զուտ զգացմունքային պատկերացումների վրա: Մենք փաստորեն օտարում ենք մեր ժողովրդի մի

հատվածը, որը, ի վերջո, անխուսափելիորեն կհայտնվի այլ պետությունների ազդեցության տակ: Մինչդեռ հայկական իսլամական, թեկուզև խորհրդանշական որևէ կազմակերպություն կարող է հայանպաստ լուրջ բեկում մտցնել իսլամական համաժողովներում և ընդհանրապես մահմեդական երկրներում: Հիշեցնենք, որ ամենահամեստ հաշվարկներով հայազգի մուսուլմանների թիվը միայն Թուրքիայում հասնում է մի քանի հարյուր հազարի: